

Հայ Eng Pyc



MEDIA GROUP FEDAYI

« Վերադառնալ

Մ. Հովհաննիսյան. Արցախի վերաբերյալ համացանցում գերազանցում են հայկական ռեսուրսները



«Երբ օտար մարդը լսում է ԼՂ հակամարտության, այս կամ այն միջադեպի մասին, նա փորձում է գտնել այդ խնդրի արմատները և այդ

արմատներին ծանոթանալու
համար նա փնտրում է
այնպիսի ռեսուրս, որտեղ
խնդիրը ներկայացված է
գիտական կամ
գիտահանրամատչելի
ձևով»,- այսօր
անդրադառնալով
համացանցային տիրույթում
իրականացվող
քարոզչությանը,
լրագրողների հետ զրույցում
ասաց ԵՊՀ Հայագիտական
հետազոտությունների
ինստիտուտի գիտական
քարտուղար, Վիրտուալ

հայագիտության և
տեղեկատվության բաժնի
վարիչ, պատմ. գիտ.
թեկնածու Մհեր
Հովհաննիսյանը:
Այնուհետև,
անդրադառնալով հայ-
ադրբեջանական
համացանցային
մրցավազքին բանախոսը
նշեց. «Համացանցի փնտրող
համակարգերում
«Ղարաբաղ» կամ
«Ղարաբաղյան
հակամարտություն»
արտահայտությունները

փնտրելով, եթե 4-5 տարի առաջ մենք կտեսնեինք, որ բավականին մեծ թվով ադրբեջանական ռեսուրսներ են ի հայտ գալիս, ապա այսօր վստահորեն պետք է նշել, որ գերազանցում են հայկական ռեսուրսները ոչ միայն հայկական ինտերնետային տիրույթում, այլև առհասարակ համացանցի տարբեր տիրույթներում»:

Մ. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ վերջին 5 ամիսների ընթացքում

կենտրոնը ստեղծել է 8
համացանցային կայքեր,
որոնք վերաբերում են Հայոց
ցեղասպանության, հայոց
սփյուռքի, հայոց
պատմության, հայ
մշակույթի, հնագիտության,
կրոնի, լեզվի խնդիրներին և
արցախյան
հակամարտությանը:
Նա այսպիսի ռեսուրսների
ստեղծման
անհրաժեշտությունը
բացատրում է նրանով, որ
դրանք պետք է դառնան
համացանցում ցանկացած

կայքի և օգտատերի համար
ինֆորմացիոն աղբյուր:
Խոսելով Ադրբեջանի
ծավալած հակահայկական
քարոզչության մասին՝ նա
նշեց, որ ադրբեջանական՝
առաջին հայացքից լուրջ
թվացող ու լուրջ
գրականության ցանկ
ունեցող աշխատանքները
հիմնվում են ոչ իրական
փաստերի վրա:
Հեղինակները վերցնում են
որևէ աղբյուրից մի
հատված, որի միջոցով, այն
կտրելով համատեքստից,

արտացոլում են այլ պատկեր:

Panorama.am



© MEDIA GROUP FEDAYI, 2011 - 2014